Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Սերեր
591

II 7/54

ԳԻՇԱՅ

ԿԱՂԱՆԴՐԻ ՕՐՎԱՅ.

Ս. Պետերբուրգ
1858.

8 Ս 5
Հ-45

II 7/54
Սերեբ
591

ԸՆԾԱՅ
ԿԱԳԱՆԳԻ ՕՐՎԱՅ
կամ
ՆՈՐ ՏԱՐԻՈՅ

Վասն ուսումնասէր տղայոց։

1596

Ա. Գ. ԲՈՒՐԳ
Ի Տպարանէ Կայսերական Հնդկական Գիտութեանց։
1858.

СЪ ДОЗВОЛЕНІЯ

Санктпетербургскаго Армянскаго Духовнаго Правленія.

591-2009

(4842
41)

26586

ԸՆԾԱՅ
ԿԱՂԱՆԴԻ ՕՐՎԱՅ
ԿԱՄՆՈՐ ՏԱՐԻՈՅ։

Երկու բարեպաշտ երիտասարդներ հարիւր օրինակ Նոր Կտակարան ծախու առին՝ և ըզգուշութեամբ ծրարելով իւրեանց բալխիրնե-րի [1] մէջը դրին, փաթտուեցան և շուտով ճանապարհ ելին արագընթաց նետի պէս դէպ ի գիւղ մի, որ քանի մի փարսախ [2] հեռու էր քաղաքէն։ Հազիւ թէ այն տեղ հասել

---

1 Сани. 2 Миля.

էին սուքա, ձայն տարածուեցաւ գիւղացւոց մէջ, թէ՝ օտարականներ [1] եկել են և հետները բերել են Աստուծոյ գիրքը։ — Այս աւետիսը խոկոյն մէկ խրճիթէն [2] միւսն հասնելով, ամէն մարդ մեծ ուրախութեան մէջ էր։ — Արբէք այսպիսի լուր լսած չէին նուքա, ոչինչ ժամանակ Աստուծոյ խոսքը նոցա մօտ ոչ ոք բերող չէր եղեր։ Խեղճ գիւղականքը փափագում էին որ այն պատուական գրքից մէկ հատ ծախու առնէին, և ոմանք էլ չէին համարձակւում այն գրքերից ձեռներն առնել և վրան նայել. վասն զի ստակ (փող) չունէին որ վճարեն։ Բայց այս երիտասարդ օտարականները եկած էին որ այս գանձը (գրքերը) վաճառելով՝ ստակ շահուէին, այլ ԿՈՒՐԱՅ ՕՒՆԱՅ համար ընծաներ էին բերել այն խղճալի գեղացիներուն պարգևելու. և ինչ աւելի լաւ ընծայ կարող էին արդեօք բերել նրանց համար՝ քան զմեր Տիրոջ Յիսուսի Քրիստոսի

---

1 Чужестранный. 2 Хижина.

Աւետարանը։ Եւ որովհետև դեռ մին քանի հատ Նոր կտակարանէն մնացել էր մօտներին. այս բարեպաշտ երիտասարդները այս տեղից դուրս եկին և գնացին ուրիշ մերձակայ (մօտ) մէկ փոքրիկ գիւղ։

Այն գիւղի մէջ շատ անձինք տեսան ներսի կողմերու բնակիչներէն, որ եկել էին ձմեռը այն գիւղումը մնան՝ և թշուառութեամբ իրանց համար ապրուստ ճարեն՝ մսավաճառութիւն անելով։ Իրաւ սոքա կարդալ գիտէին, բայց ինչ օգուտ որ Աստուածաշունչ չունէին։ Երբ որ օտարականները դուրս հանեցին իրանց ձեռքը մնացած գանձը (գրքերը), գիւղացիները մեծ զարմանքով նորանց չորս կողմը ժողովեցան, և ձիւնի վերայ երես անկեալ կըխնդրէին՝ որ այս կենաց հացէն մէկ պատառ տային։ — „Ո՛հ տուէք մեզ մեր Տիրոջը Յիսուս Քրիստոսի Աւետարանը“։ Դժբաղտաբար մէկ քանի օրինակ միայն մնացել էր, և հարկ եղև բաժանել էնդունք առանց կարող լինելու ամենին էլ բաւականացուցանել։

Այս վերադարձան երիտասարդները դատարկ իւրեանց բալխիրներովը, բայց սիրտները սուրբ խնդութեամբ լի. և այն իրիկունը նորանց տեսնողները ասային միմեանց „Ահա երջանիկ մարդիկներ, անշուշտ սոքա լաւ կաղանդ անցուցին“։

Հինգ ամիսէն յետոյ այս ճանրորդութիւնը ուրախութեան աղբիւր եղև իրենց. երիտասարդ քրիստոնեաների մէկին, մի գեղացի տեսութիւն անելու եկաւ և ասաւ նորան. — „Տէր, ես այն մարդիկներէն մէկն եմ որոնց որ դուք գրքեր ընծայ տուիք կաղանդի օրը. այժմ եկել եմ ես որ բոլոր իմ դրացիներուս կողմանէ շնորհակալ լինեմ ձեզնէ։ Ահ տէր իմ, շատ ընտանիքներ ուրախացուցիք դուք այն կ՚ու�՚ դէ՚ օրը՝ այնպիսի գիրք մի ընծայ տուիք մեզի, որ մեր փրկիչ Յիսուսի վերայ կրխօսի“։ —

Անհնար է պատմել, թէ՝ ինչ խնդութեան մէջ էր երիտասարդը, և թէ ինչպէս իւր սիրտը կըվառուէր և կըբորբոքէր գեղացիներու

գոհ լինելուն՝ պարգևած նոր կտակարան գրքերուն վերայ։

Անշուշտ բոլոր աշխարհը շուտով կը լցուէր Աստուածգիտութեամբ, թէ որ Քրիստոսի բոլոր աշակերտները այսպիսի զգացմունքներ ունենային։

— Ո՛վ ընթերցող, վասն էր քու սիրտդ և իմն նոյն կրակովը վառուած չեն։

Ընական Քերթողահանէն։

Եթէ որ սովորութիւն լինէր տղայոց ի մանկութենէ անտի միշտ ուղիղ խօսակցութիւն լսէին, քիչ հարկաւորութիւն կըմնար քերականական կանոնները սովորելու, յետ այնորիկ ուղիղ կըխօսէին և կըգրէին։ — Այն իսկ է պատճառը, որ կրթեալ (ուսեալ) ծնողաց զաւակները աւելի յաջող և գեղեցիկ կը խօսին, քան թէ անկիրթներինը։ —

Լեզուի սովորութիւնը կը բնաւորուի նոյանից, որոնց հետը կը կենցաղաւորին նոքա. և թէ կամենայինք որ մեր տղայքը՝ այս մասին յառաջադիմութիւն ունենային, հարկաւոր էր մեզ զգոյշ լինէինք, որ բնաւին այլազգական բառեր չխառնէինք մեր խօսակցութեանը մէջ։ Ծնողքը և վարժապետները պարտաւոր են, այնպիսի բառեր գործ ածել զաւակաց և աշակերտաց համար, որովք կարողանան ուղիղ խօսակցութիւն ուսուցանել։

Տղայոց մտացը մէջ տպաւորելու առաջի բանը՝ Աստուծոյ երկիւղն է։ — Այս է իմաստութեան սկիզբը, մէջը և վերջը։

Օգնի այնորիկ՝ պէտք է սովորեցնել նոյանց, որ միմեանց հետ սիրով վարուին։ — Մեծ զգուշութիւն է հարկաւոր՝ չիցէ թէ, նոցա (տղայոց) առջևը՝ անվայել բաներու վերայ խօսուի. որովհետև մտաց տպաւորութիւնները փոքր հասակի մէջն է լինում, և ընդ հակառակն բոլոր մեր խօսակցութիւնները

բարի և վարժութիւն ընդունելու բաների վերայ պարտ են լինել։ Ուռանց իրենց և այլոց ղգալու տղայքը մեծ օգուտ կը քաղեն այն բարի և վայելուչ խօսակցութիւններէն։

Կաղանդի օրը Պետերբուրգի մէջ։

Կաղանդի օրը Պետերբուրգի փողոցները բոլորովին ծածկուած էին մէկ քանի ոտնաչափ ձիւնով։ Դեռերը սառել էին, ձիերը և կառքերը գեղեցիկ զարդարուած, անդադար երթեւեկութիւն ունէին նոյն տեղէն, որ տեղից որ քիչ ժամանակ առաջ նաւերը կանցանէին հողմալից առագաստներով։ Փողոցներէն նոյնպէս հաղարաւոր բալխիրներ կը բանէին, որոնք սրաթռիչ նետերու պէս կերթային սառոյցներուն վրայով, այնպէս որ մէկ քանի փարսախ հեռու տեղերից քանի մի րոպէի մէջ կերթային։ Վերջապէս բոլոր այս բաները մարդուս

միտքը կը բերեն սաղմոսերգողի այս խօսքերը թէ՝ „Այն որ բուրդի պէս ձիւն կուտայ, և եղեամը մոխիրի պէս կը ցանէ։ [1] — Իւր սառը կտորտանքներու պէս կը նետէ, և նորա ցուրտին դէմ ո՞վ կարէ կենալ։ [2] Դայց կասէ նախընթաց համարին մէջ — „Այն իւր խօսքը երկրի մէջ կը ղրկէ, իւր խօսքը շատ շուտով կը վազէ“։ [3] Ահա այսպէս եղև այն նոյն օրը։

Քանզի այս ցրտասառոյց երկրիս մէջ կան նաև այնպիսի սրտեր, որ Քրիստոսի սիրովը վառուել և բորբոքուել են։

— Սորանցից երկու հոգի միաբանեցան և մտքներին դրին որ այս Հաղորդէ օրը ուրախու-

---

1. Դնէ ձիւն որպէս զասր. և զմէգ որպէս փոշի ցանեաց։

2. Արկանէ զսառն որպէս պատառս. առաջի ցրտոյ նորա ո՞ կարէ կեալ։

3. Առաքէ զբան իւր յերկիր. վաղվաղ ընթանան պատգամք նորա։ Սաղմ. 147.

թեամբ անցուցանեն. վասն որոյ որոշեցին որ զբօսանալու երթան, բայց այնպիսի մի զբօսանքի, որ անցնելէն ետև ևս նորա յիշատակը քաղցր լինի իրենց համար, և մահուան անկողինին վերայ ևս կարող լինին յիշել և բերկրութիւն մի զգալ։

Կենդանի հարստութեանն գերեզմանց է։

Բոլորովին ոչինչ բան է այն մարդուն գործը, որ կը ջանայ իւր որդւոցը համար փող վաստակելու և հարստանալու ճամբաներ գտնել. և զանց կանէ նորանց ամենահարկաւոր կրթութիւնը տալու հոգ տանիլ։ —

Այնպիսին կը նմանի մէկ անխելք մարդու, որ յարդը [1] կը ժողովէ և մեծագին քարերը կը ցրուէ։ — Թող ծնողքը մեծ փութով ջանք

---

1 Солома.

անեն իրենց որդւոց միտքը և բարոյականու-
թիւնը մշակելու, և անշուշտ շատ անգամ նո-
քա իրենց աշխատանքին փոխարէնը հարիւրա-
պատիկ պտուղ կը քաղեն։

Անհոգ[1] տղէ։

Մի Աստուածապաշտ և ընկերասէր կին
ունէր մէկ աշխատող բանւոր կնիկ իւր տան
մէջը։ — Մէկ օր խօսակցութիւն եղև հոգւոյ
փրկութեան վերայ, խեղճ կնիկը թէպէտ շատ
ուրախութեամբ կը լսեր նորա խօսքերքին,
բայց իւր ցաւը այն էր որ կարդալ չգիտէր։
Ուստի նոյն օրը նոր կտակարանէն մէկ քանի
մասը նորա մօտ կարդացին։ — Ո՛հ ասաց խեղճ
կնիկը, այս ի՞նչ լաւ գիրք է՝ կը փափագիմ
մէկ հատ ունենալ այս գրքից, իմ մարդուս
համար, որ նա գիտէ կարդալ։ — աղաչեմ քե-

---

1. Беззаботный.

զի եթէ կամիս առ ինձ համար մէկ հատ և ես քիչ քիչ իմ պարտքս կը վճարեմ քեզի։

— Շատ լաւ ասաց տիկինը (խանումը) առ այն գիրքը և հետքդ տուն տար։

— Իրիկունը երբ որ կինը դարձաւ տուն, ցոյց տուեց իր մարդուն այս պատուական գանձը՝ այսինքն առած գիրքը, — մարդը առաւ այս գիրքը ձեռքը և ասաց կնկանը՝ „այս ի՞նչ է“ կինը ասաց „Նոր կտակարան“. մարդը՝ „ծա-խո՞ւ առիր, կինը՝ այո՛ (հրամերէս). մարդը՝ „Ո՛հ լաւ կը լինէր որ չառնէիր՝ զուր տեղը փողդ կորուսիր — վասն զի մեզի այս անօգուտ բան է“... „Ա՛յ բոլորովին ընդ հակառակն է պատասխանեց կինը — Սորա մէջ լաւ բաներ կան, որ ես ինքս լսած եմ. որ եթէ որոնես (փնտռէս) պետք է որ գտնես այն բաները“։

Սիրելի կնկան խօսքը լսելով մարդը բացաւ գիրքի մէջը՝ առաջին խօսքը այս էր։ — „Կայր ոմն նստէր առ ճանապարհաւն մուրա-„ յիկ։ Իբրև լուաւ զանցանել ժողովրդեանն,

„ հարցանէր թէ զի՞նչ լցէ այն, և պատմեցին
„ նմա, թէ՝ Յիսուս Նազովրեցի անցանէ։ —
„ Աղաղակեաց և ասէ, Յիսուս որդի Դաւթի
„ ողորմեա՛ց ինձ “։ . . .

Այս խօսքին վերայ՝ իւր միտքը այնպէս հաճեցաւ որ չի կարողացաւ գիրքը ձեռքէն թողնել և բոլոր գիշերը կարդաց մինչև որ աւարտեց, և ասաւ. „բարի՛, արդարև լաւ բաներ կան այս գրքի մէջ և շատ պատուական գիրք է “։ — Ի՞նչ օրինակ է այս բարեպաշտ կնիկներուն, որոնց մարդիկները Աստուածապաշտ չեն. և ի՞նչ նախատինք կը մատուցանեն Աւետարանին շատ հետևողներուն, որոնք որ իրենց տուներուն, պարտէզներուն կամ խանութներուն և կամ գործարաններուն մէջը աղքատ տգէտ և բանւոր մարդիկ ունին, որոնց բնաւ մէկ գլուխ բան չի կարդացին, և բնաւ մէկ խօսք ևս չխօսեցան նոցա հոգիներուն փրկութեան վերայ։

— Ո՛վ Քրիստոսի աշակերտք արթնեցէ՛ք, արթնեցէ՛ք ձեր թմբիրութենէն. ընդունեցէ՛ք ձեր

Տիրոջ Հոգին, և դուք ձեզ Նորս անուան գիտութիւնը տարածելու պատրաստեցէք։

Աւր ուսեցած հոգացողութիւնը [1] զաւակաց վարձուցեան համար։

Մի փոքրիկ գիւղի մէջ՝ մէկ աղքատ կին կը բնակէր, որ չորս զաւակով որբևայրի մնացել էր. և իւր պակասութեանը հոգացող չունէր։ Զաւակների ամենից մեծը տասն տարեկան էր, սորանց ամէն մէկին վարժութեանը համար փող տալու կարողութիւն չունէնալով, և սակայն փափագելով որ բոլորն էլ վարժվին։ Գիւղի վարժապետի հետը դաշնադրութիւն արաւ որ մէկ տղին վարժութեան դնովը, երկու տղայ ընդունի վարժելու. մէկ օր մէկը երթայ դպրատուն և հետագայ օրը միւսը։

---

1 Попеченіе.

Այս գովական ճամբովը անգին երջանկութիւն գտաւ իւր զաւակներուն երկուքին ևս վարժութիւն տալով, և մէկ զարմանալի օրինակ ցոյց տուաց որով շատ իրան նման աղքատներ կարողացան զաւակները վարժութիւն տալ դպրատուն ուղարկելով, նոյն դաշնադրութեամբը։

Որո՞ւ է ամէն էնէն լաւ։

Մէկ իմաստուն վարժապետ իւր աշակերտներին առաջարկեց, [1] որ մտածեն և իրան պատասխանեն թէ՝ աշխարհի մէջ ամենէն լաւ բանը որն է։ — Աշակերտներէն մէկը ասել է թէ՝ էուրէ ալ ունենալէն լաւ բան չի կարող լինել, որ կը նշանակէ աղնիւ և գոհ բնաւորութիւն ունենալը։ Միւս ևս աշակեր-

---

1 Предложилъ.

տը ասել է աշխարհի մէջ ամենէն լաւը՝ է՞ւ է ունենալն է։ Երրորդը ասել է թէ, իմ ամենէն լաւ ուզած բանս է՞ւ է ստացեր է[1], և չորրորդը պատասխանել է թէ, ես կարծեմ ամենէն լաւը այն մարդն է՝ որ լինելու բանը առաջ կարող է իմանալ. այսինքն էմ՞ոռոռ-ն ունէր։ = Բայց վերջը աշակերտէն մէկը Եղիազար անունով ասել է թէ, է՞ւ ոնէրոը սորանցից ամենէն լաւ է։

— Հիմարիտ ես, պատասխանել է վարժապետը, բոլոր միւսների ասածները դու երկու խօսքով յայտնեցիր։ Քանզի այն մարդը, որ բարի սիրտ ունի, զոհ բնաւորութիւն կունենայ, բարի ընկեր և բարի դրացի կը լինի, և դիւրեաւ կիմանայ թէ՝ իրան ինչ կվայելէ անել։

Ուրեմն ամէն մարդ թող աշխատի բարի և անմեղ սիրտ ունենալ միշտ, որով շատ ուրիշ ուրիշ նեղութիւններէն ազատ կը մնայ ինքը։

---

1. Сосѣдъ

ՀՍՍՀ ԳԱ Գրադարան
ՍՍՀՄ-ում տպագրված
ՀՍՍՀ ԳԱ Մեսրոպ Մաշտոցի անվան Ձեռագրերի ինստիտուտ
41
591-2009

Ո՛ՐԵ ՍՐԵԼԻ ՕԳՈՒՆԵՐ Է ՀԱՐԳՈՒՆ, ՈՐԵՐ՝ ՇԷ ԳՐԻՉԸ։

Ժամանակով քարը գրիչի հետ կռուեցաւ, վասն զի քարը միշտ կը հակառակէր, թէ՝ ինքը աւելի օգտակար է քան թէ գրիչը. ուստի քարը սկսաւ խօսիլ հպարտութեամբ այսպէս։ „Ես ամէն գրիչներէն օգտակար եմ, պատճառ „որ առանց ինձի մէկ տուն չի շինուիր, ա„ռանց իմ պահպանողական օգնութեան, ոչ „մարդիկ կարեն ընկերութեամբ մէկ տեղ կե„նալ, ոչ թագաւորները պալատներ [1] կարեն „ունենալ, և ոչ ժողովուրդները երկրպագու„թեան տաճարներ։ Վասն այն իշխանները [2] և „կառավարները [3] շատ յարգութիւն կընծայեն „ինձի, վրայէս անցած ժամանակին։ = Իմ „անթափանցելի [4] պաշտպանութեանս ներքոյ, „գանձեր պահուած են մեծ ապահովութիւն [5]. „ինձնից անուշ ջուրեր կը բղխեն, և հոգնած

---

1 Дворецъ. 2 Вельможа. 3 Кучера. 4 Не

„ Ճամբորդներուն ծարաւութիւնը կանցընեն։
„ Ես շատ կը դիմանամ, քանի որ սառ լեռ-
„ ները կան, ես էլ կը կենամ. և աշխարհիս
„ ամէն կողմերը առատութեամբ կը գտնվեմ,
„ երբեմն ես ըստ պատահմանն եթէ որ փոշի [1]
„ դառնամ, սակայն ժամանակ անցնելէն յետոյ
„ առաջվան պնդութիւնս կըստանամ։ Մտիկ
„ արա (նայէ) ով գրիչ, ես կը լինիմ փողոց-
„ ների յատակները, որ մարդոց բազմութիւնը
„ կերթայ նորանց վրայով. և ինձանով չարա-
„ գործ հսկաների [2] աչքերը դուրս ընկան, և
„ ատամները թափեցան։ = Ես էի որ գնացի
„ համբուրեցի հսկայ Գողիաթի ճակատը։ Ես
„ ահա էէ որ գեղեցիկ թագուհիների և ազնիւ
„ թագաւորների գլխի զարդարանքները իմ ան-
„ դամանդ [3] եղբայրներս են։ = Ամէն մարդ
„ գիտէ որ ես շատ ծանր և անշարժ եմ, և իմ
„ դայլախաղ [4] դէմքովս ամէն անարգանքներու
„ դէմ կը կենամ. թէ որ ուզեմ բոլոր գրիչ-

---

1 Прахъ, песокъ. 2 Великанъ. 3 Бриллiантъ. 4 Кремень.

„ ներ՝ բերանը յետ կը դարձնեմ, այնպէս որ
„ բնաւ մէկ բանի հարկաւոր չէինին։ Այս շատ
„ կապրիմ և բնաւ չեմ մաշուիր, երբ որ մար-
„ դիկ իմ վրաս ոտք կը կոխեն՝ թող յիշեն
„ թէ՝ իրանցից բարձր տեղարէնք էլ կը կե-
„ նամ, և կարող եմ վար ընկնել և գլուխները
„ ջարդել։ Այս կշռի մէջ կը գործ ածվիմ,
„ ոսկիին դէմ կը կշռվիմ, և իմ անաչառ վը-
„ ճռռովս երկու հակառակորդներ կը միաբանին։
„ Իմ վրաս գրուեցան Աստուծոյ օրէնքները
„ անջնջելի գրերով, երբ որ դու ուրիշ բան
„ չէիր, բայց միայն անօգուտ եղեգն և սագի
„ (զագի) փետուր մի. և քո այսպիսի գործա-
„ ծութիւնդ աշխարհ չմտած, սրբազան պատ-
„ մութիւնը արձանագրեցաւ իմ վրաս“։

Այսչափ խօսեցաւ քարը իւր յատկութիւն-
ներու վրայ և մարդոյ ընծայած բազմակերպ
օգտին համար։ —

Գրիչը պատասխան տուաւ շատ նեղու-
թեամբ և ասաւ։ „Դու ով քար, քու նպա-
„ տակիդ չհասար, ուղիղ ճանապարհէն խոտո-

„ բեցար, և քու բնութիւնդ շատ ամուր է և
„ անհասկացող։ Զգիտես որ ամենակարող Աս-
„ տուծոյ հնախօսութիւնները ինձանով գրուե-
„ ցան, և ինձանով գիւրին է ամենայն մարդոյ
„ իւր կամքը յայտնելու, և մարդոց սովորե-
„ ցնելու նորա կատարումը։ — Իմ երկձիւղ
„ լեղուիցս այնպէս պատճառներ գուրս եկին,
„ որ առանց նորանց ճշմարտութիւնը չէր կա-
„ րող հաստատուիլ . . . , ինձանով գրուած մէկ
„ հատ գիրը կարող է ճշմարտութիւնը բաժա-
„ նել ստութենէն։ — Ամենաւոր գժուարին
„ բաներ լուծել եմ, որ էլ ընաւ մթութիւն
„ չունենան, և ամենին էլ հասկանալի եղեն։
„ Աս միջնորդ եմ լինում աղքատին աղերսա-
„ գրով և վկայականներով։ Ամենը իմաստութիւ-
„ նը իմ ձեռքս է, ես կը գրեմ ամէն պատ-
„ մութիւնները և անցքերը. մինչև որ մեռել-
„ ները կը կենդանացնեմ՝ նոցա հրաշալի գործ-
„ քերը պատմելով։ — Աս աշխարհիս մատեա-
„ նը (գիրքը) կը բանամ, և նորա ծածուկ բա-
„ ները ծայրէ ծայր կը յայտնեմ. առանց ինձի

„ բնաւ մէկ հաշիւ չէ կարող լինել։ — Ես
„ մարդկային ազգի ընդհանուր համարակալն [1]
„ եմ, ես կը գրեմ բոլոր ժամանակագրութիւն-
„ ները [2] ընդ ամէնն մինչև ցայժմ։ Ես մաքուր
„ կը պահեմ բոլոր լեզուները։ — Ես անցեալ
„ ժամանակների համար՝ մէկ պարզ հայելի [3] եմ,
„ այն պատճառի, որ քերականութիւնն է լե-
„ զուն ուղղողը. և պատմութիւնն է անցեալ
„ օրերի ներկայացնողը։ = Թէ որ մարդիկ գի-
„ տենային իմ յարգութիւնս, և իմ օգուտներուս
„ և գործքերուս մէկ արժողութիւն տային, այն
„ ժամանակը կը հարստանար իմ տէրս՝ միայն
„ մէկ քերականութիւն յօրինելով։ Հշմարիտն
„ ասեմ՝ թէ որ ես չլինէի, բոլոր արհեստնե-
„ ը և գիտութիւնները պէտք էր կորնչէին.
„ և մէկ զանազանութիւն չէր լինիլ ի մէջ
„ թագաւորի և հպատակներին։ Պատճառը որ
„ թագաւորութեանց կառավարչութիւնը ինձա-
„ նով է լինում, և ճանապահների ապահովու-

---

1 Контролеръ. 2 Хронографія. 3 Зеркало.

„Թիւնը [1] ես եմ. կարող եմ մէկ լեառն [2] շու-
„տով փոշի դարձնել, միայն մին քանի գրե-
„րով մէկ քանի վայրկեանի [3] մէջ, մեծ
„պաշտօնների և իշխանութիւնների կը հասա-
„ցնեմ երևելի մարդիկները։ Հեռու տեղից
„բաներ մօտ կը բերեմ, և կարող եմ բազմա-
„թիւ բաները մէկ տեղ հաւասարացնել. լե-
„ղուի և աչքի դործիքը լինելով կը ստորա-
„գրեմ այնպիսի բաներ, որ նրանք չեն կարող
„առանց ինձի գրել։

— „Երբեմն սուրը կառնեմ ձեռքս, մին-
„չև անգամ իշխաններ և կառավարներ իշխա-
„նութենէ կը զրկեմ. նմանապէս ժլատներին
„առատաձեռն [4] կանեմ, և նուաստներին իշխա-
„նութեան կը հասուցանեմ։ — Այս գիտուն և
„շնորհալի եմ, ազնիւ և ուշիմ... վերջապէս
„ես այնպէս թեթև եմ, որ ազնիւ տիրուհի-
„ները՝ իրանց փափուկ մատների մէջը ինձ

---

1 Безопасность. 2 Гора. 3 Минута. 4 Щедрый.

„ կը բռնեն, և երբեմն ազնուականները իրենց
„ աչքերի և ականջների վերայ կը պահեն ինձ։

Կ ա ծ ո ղ ։ [1]

Մէկ վաճառական որ քանի մի տարի առաջ Սպահանի մէջ մեռաւ և շատ փող թողեց, այնչափ կծծի [2] էր, որ ամենայն հարկաւոր բաներէն կը զրկէր իւր անձը և իւր որդին, միայն չոր հացով ապրուստ կանէր։ Սա մէկ օր մէկ կտոր պանիր առաւ, որոյ համը իւր բարեկամը միայն գովել էր. բայց տուն չհասած ճանապարհին ինքն իրան սկսեց նախատել իւր շռայլութեանը [3] համար. երբ որ տուն հասաւ պանիրը փոխանակ ուտելու դրաւ մէկ շիշի [4] մէջ և այն բաւական համարեց, որ հացը շի-

---

Скупость. 2 Скряга. 3 Роскошь. 4 Банка.

շէին քսելով ուտի, որդին էլ պարտաւոր էր նոյնը կատարել. այսինքն՝ միայն երևակայութեամբ ուտել պանիրը։

Մէկ օր հայրը սովորական ժամանակէն ուշ տուն դառնալով՝ տեսաւ որ որդին չոր հայը սենեանի[1] դռանը քսելով կուտէ. — ի՞նչ կանիս խենթ (յիմար) տղայ, ասաց հայրը, կերակուրի ճաշի ժամանակ է։ — Պատասխանեց որդին. հայր՝ բանալիքը քու մօտդ է... չկարողացայ դուռը բանալ. ուստի հացս դռանը քսելով կուտեմ, վասն զի շիշային չէմ կարողանում հասնել։ — Մէկ օր առանց պանրի չե՞ս կարող մնալ, շուայլ տղայ... դու երբէք չես հարստանալ. ասաց կծծի հայրը բարկութեամբ, և մէկ քանի ապտակ (սիլլայ) զարկեց խեղճ տղային, որ իւր երևակայական հեշտութենէն[2] չ՚կարողացաւ ինքն իրան պահել։

---

1 Комната. 4 Мечтательнаго сладострастія.

Ռուբէնյոնց Վրէոռոնէանէր։

Մէկ ծերունի գիւղացի իւր թոռները տան մէջը տեսնելով՝ միշտ սաստիկ բարկու�դուրս կանէր նորանց։ Մէկ օր այս փոքրիկ տղայոց մէկը՝ իւր մօր մօտ լինելով, երբ որ մայրը երկնից արքայութեան վերայ կը խօսէր իւր որդ-ւոյ հետ։

— Մ՚այր իմ՝ ասաւ որդին, ես արքայու-թիւն գնալ չէմ ուզեր։

— Ի՞նչ կասես այ տղայ. մի՞թէ չես ու-զում արքայութիւն երթալ։

— Չէ՛ մայր, ճշմարիտ որ չեմ ուզում ար-քայութիւն երթամ։

— Մ՚այրը ասաւ, ի՞նչ պատճառի։

— Որդին, այն պատճառի, որ մեծ հայրս արքայութիւնումը կը լինի։

— Մ՚այրը ասաց, ճշմարիտ է՝ յուսով եմ որ՝ այն տեղ կը լինի մեծ հայրդ։

— Որդին՝ չէ՛, չէ՛. նա մեղ այն տեղ տե-սանելով կը արտաքսէ. դուրս, դուրս, դուրս՝,

ասէ մեզի. — ի՞նչ բան ունին մանր տղայ-
քը այս տեղ։

Ուրեմն՝ թէ որ մեծ հայրս արքայութիւն
պիտի գնայ, ես ամենևին չեմ ցանկանայ ար-
քայութիւն երթալ և անարգանք լսել։

Ուստի պէտք է ծնողք գիտենան, որ տղայ-
քը միշտ բաց աչքով կը նայեն իրանց ծնողայ
վարքին, և իրանք նոյնպէս արթուն լինին և
չ՝բարկանան զուր տեղ։

Նմանապէս չար օրինակ չ՝լինեն՝ տղայոց
դաստիարակութեանը, որ նոքա ևս իրենց ա-
ռաջևը ատելութեան բան չ՝խօին։

Անակնկալ յաջողութիւն։

Զմեռվան գիշերը մէկ խեղճ գերդաստան աղքատութեան աղէտալի վիճակի մէջ կը տառապէր, տունները ողորմելի, դռները ցած, պատուհանները [1] նեղ, ներսի կահ կարասիքը [2] կոշտ, ուտելիքները չոր հաց, և իրանք տարակուսած։

— Ընմեղ երեխայքը, ցուրտէն դողալով իրանց մօրէն կրակ կուզէին, բայց մայրը չէր կարողանում նորանց խնդիրքը կատարել. այն պատճառի որ ածուխ [3] (գործելի) չունէին։

— Քիչ աւելի հաց կուզէին. մայրը չէր համարձակվում ունեցած չորաբեկ [4] հացէն ճեացածն նորանց տալու. վասն զի միւս օրվան հաց գնելու (առնելու) փող չունէին։

Չրեխերքից մէկի ոտը ցուրտէն խիստ մրբսած անհնարին կը ցաւէր և կը կաղէր, բայց

---

1 Окны. 2 Мебель. 3 Уголь. 4 Черствый.

մ՚ղբ որ չէր կարող մէկ զոյգ մուճակ [1] (հո-ղաթափ) առնել։ — Հայրը ներս մտաւ, և ճրագ ուզեց, և որովհետև վառելու իւղ չու-նէին, հարկ էլաւ և նորա մութ սենեակումը նստել։ —

Այսքան թշուառութիւնը բաւական չէր իրանց, յանկարծակի մէկ թղթաբեր [2] սենեակը մտնելով՝ ստակ (փող) կուզէր իւր բերած նա-մակի (բարևագրի) համար։ — Սոցա խղճու-թեանը նայելով՝ թղթաբերը ասաւ, որ յետոյ վճարեն բերած նամակի վարձը՝ և գնաց։

Բայց երբ որ բաց արին նամակը և կարդա-ցին՝ որոյ մէջը գրած էր թէ՝ „հեռու տեղ „իւրանց աղգականին մէկը մեռնելով, մէկ մեծ կալուած [3] է թողել կտակաւ, սորանց ժառան-գութեան [4] համար։

Այնուհետև նոցա աղքատութիւնը վերջա-ցաւ և նոյն րոպէին հարստացան. թէ և տա-

---

1 Туфель. 2 Курьеръ. 3 Вотчина. 4 Наслѣдство.

կաւին մէկ քանի օր պէտք էր անցանէր, որ այն ստացուածը ձեռքները հասնէր։

Անհնարին կարօտութեան ցաւերը մէկ կողմը մնացին. առատութեան և լիութեան ուրախութիւնքն յաջորդեցին։ Առաջ որ սաստիկ աղքատութենէն չէին կարողանում քուն լինել, այժմ անպատմելի ուրախութիւնը, բոլորովին փախցրուց նոցա քաղցր քունը։

Այսպէս կը պատահի նաև Քրիստոսի հետեւողներին, երբ որ նոքա աշխարհի նեղութեան և տառապանաց մէջ գտնվին, սրբազան նամակները կը դան և կաւետեն նոցա այն ժառանգութիւնը, որ անվախճան և յաւիտենական է։

Զաքէոս մաքսապետը։

Յիսուս Քրիստոսը միանգամ շրջում էր Երիքով քաղաքումը, մի մեծատուն մաքսապետ[1] ցանկանում էր տեսանել նորան... բայց ժողովուրդների բազմութիւնը և իւր կարճահասակութիւնը պատճառ լինելով այդ մասին, վեր ելաւ ժանտաթզենւոյ ծառը, որի մօտից պէտք էր անցանէր Յիսուսը։ — Երբ Յիսուս տեսաւ նրան ծառի վերայ, իսկոյն ձայն տուեց. Զաքէոս, շուտով ներքև իջիր այդ տեղից, որովհետև այսօր արժան է ինձ քո տանը իջևանիլ։ Զաքէոսը վայր իջաւ և ընդունեց նորան ուրախութիւնով. բայց ժողովուրդները արտնջում էին, Յիսուսի հիւր գնալոյ համար այնպիսի մեղաւոր մաքսապետի տունը։

Զաքէոսը երբ լսեց Յիսուսից աշխարհիս ունայնութիւնը և յաւիտենական կենաց երջանկութիւնը. ասաց տէր, — իմ կայքի կէսը կը

---

1. Мытарь, пошлинникъ.

բաշխեմ աղքատներին. և եթէ մի մարդ զրկել եմ, չորեքպատիկ կը հատուցանեմ։

Յիսուսը ասաց, այսօր փրկութիւն էլաւ այս տանս. որովհետև որդին մարդոյ եկել է որ դարձ եկած մեղաւորներին քարոզէ և կեցուցանէ։

Այս օրինակը Յիսուս ցոյց տուաւ ամենայն մեծատանց. որ հետևելով սոյնօրինակ դարձման մեղաւորաց, արժանասցին միանգամայն երանաւէտ կենաց և երկնից արքայութեան։

Գինն է 20 կոպ. ամբ.